ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 173-Ա

«26» ՕԳՈՍՏՈՍ 2022Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 19-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի թիվ 46-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 210-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2022թ. հիմնական միջոցառումների» պլանի 8.2.1 կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2022 թվականի սեպտեմբերի 8-ին Վայոց ձորի մարզում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն (այսուհետ՝ ՀՏՈՒ) «Հրդեհաշիջման, որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ Վայքի մասնաճյուղի փլուզված մասնաշենքում» թեմայով:
2. Ցուցադրական ՀՏՈՒ-ի ղեկավար նշանակել Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանին.
3. Ուսումնավարժությանը ներգրավվել՝

1) Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունը, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության թիվ 61 հրշեջ փրկարարական ջոկատը, «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ Վայքի մասնաճյուղի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Վայոց ձոր» ԳԳՄ Վայքի ՏՏ, «ՀԷՑ» ՓԲԸ Վայքի տեղամասի անձնակազմերը, ՀՀ ոստիկանության Վայքի բաժանմունքը, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Վայքի տեղամասը, Վայքի բուժ.միավորումը և ԿԽԸ Վայոց ձորի մարզի մասնաճյուղի արագ արձագանքման թիմը:

4. Ուսումնավարժության ղեկավարին՝ ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով հաստատել՝
   1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը.
   2) ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը.
   3) ուսումնավարժության անցկացման պլանը.
   4) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը

5. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով, սարքավորումներով և տեխնիկայով.

2) ճշգրտել փոխհամագործակցության պլանները.

3) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

4) ուսումնավարժության ընթացքում պահպանել անվտանգության կանոնների պահանջների կատարումը.

5) պատրաստ լինել ուսումնավարժության ղեկավարին զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարված միջոցառումների մասին:

6. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ուսումնավարժության ղեկավար, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանի վրա:

8/26/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

բ. Եղեգնաձոր